

## Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի  
2006թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական  
արդյունքների մասին

1. 2006 թվականին ՇՀՀ կենտրոնի ունեցած ձեռքբերումների մեջ կարելի է առանձնացնել.

ա) Մեծ Սեպասարի նորահայտ հնագիտական հուշարձանի երկրորդ տարվա պեղումների, տեղում հայտնաբերված բազմաբնույթ գտածոների կամերալ մշակման ու վերականգնման և մշակութային շերտի առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրության հիման վրա ապացուցվում է հուշարձանի թվագրումը մ. թ. ա. III հազարամյակով: Մեծ Սեպասարում հայտնաբերված նյութերից 20-ը ընտրվել են Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում 2007թ. հունվար-փետրվարին կազմակերպվող «Հայաստանի լեռներում» ցուցահանդեսի համար:

բ) Գիտականորեն ճշգրտված կարելի է համարել նաև մ.թ.ա. I հազարամյակում Ախուրյանի ավազանի բնակչության էթնիկական կազմի և առասպելաբանական պատկերացումների վերաբերյալ մի շարք վիճելի հարցեր՝ մասնավորաբար կապված Ախուրյանի ավազանի բնակչության հնդեվրոպական ծագման, այստեղ հնդեվրոպական հասարակության եռադասյա բաժանման մոդելի կիրառման, տարածքում հայտնաբերված ուրարտական մեհենագրության լեզվի, ուրարտական դիցանվանացանկի և այլն:

գ) Արևելյան Շիրակի XIX դարի II կեսի ժողովրդագրական վիճակի, սոցիալ-տնտեսական և հասարակական ու մշակութային կյանքի համակողմանի ուսումնասիրության հիման վրա ավարտուն տեսք է ստացել պատմական գավառի մեկդարյա ամբողջական պատմությունը:

դ) Կենտրոնի կարևոր ձեռքբերումներից է նաև «Գիտական աշխատություններ» ժողովածուի VI I I հատորի հրատարակությունը՝ 12 հրատ. մամուլ ծավալով:

2. Հաշվետու տարում կենտրոնում իրականացվել է բազային ֆինանսավորմամբ «Շիրակի հնագիտական և պատմաազգագրական ուսումնասիրություններ» գիտական թեմայի (ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆեսոր Ս. Հայրապետյան) երկրորդ տարվա համար ծրագրավորված աշխատանքը: Թեմայի կատարման մեջ ներգրավված են կենտրոնի 12 գիտաշխատողներ, և ուսումնասիրությունները տարվում են չորս ուղղություններով՝ Շիրակի հնագիտություն, պատմագիտություն, ազգագրություն և էթնո-հոգեբանություն:

▪ Հաշվետու տարում շարունակվել են պրպտումները ուրարտական սեպագիր արձանագրություններում հին հայկական աստվածությունների վերաբերյալ տեղեկություններ-

րի հայտնաբերման ուղղությամբ: Պարզվում է, որ այդպիսիք առկա են «Միերի դռան» ուրարտական դիցանվանացանկում (Էլիպուրի, Թառախնի, Ադարութա և Իրմուշինի), և նրանց գոյությունը կապվում է Հայկական լեռնաշխարհում ցորենի քառամսյա վեգետացիայի հետ՝ որպես դրա հովանավորներ: Նոր փաստեր են հայտնաբերվել Ախուրյանի ավազանի բնակչության՝ որպես հնդեվրոպական հասարակության, եռադասյա բաժանման մոդելի մասին: Ուրարտական շրջանին վերաբերող հարցերից կարևոր է նաև Գյումրու պեղածո գոտու բեկորի ուսումնասիրության հիման վրա խմբի կողմից առաջ քաշվող այն տեսակետը, որ ուրարտական սեպագրությանը նախորդել է մեհենագրության լեզուն, որն ի տարբերություն սեպագրության լեզվի՝ հայերենն է: Գրախտի չորս գետերի հնագույն անունների (Գեհոն, Փիսոն և այլն) նոր ստուգաբանություններով գիտականորեն ամրապնդվում է նաև խմբի կողմից նախկինում առաջադրված դրույթը նախաուրարտական շրջանում Ախուրյանի ավազանում հայախոս բնակչության գոյության մասին: Հաշվետու ժամանակահատվածում բավականին խորացվել է նաև Ախուրյանի ավազանի երկրների հետ կապի առումով Երվանդունյաց դարաշրջանի Հայաստանին վերաբերող ուսումնասիրությունները, մասնավորաբար Արշամի (մ.թ.ա. –րդ դ.) կողմից թագավորության կազմում Ծովք-Կոմագենեից բացի նաև Ախուրյանի ավազանը ներառնելու, Գուգարքի բղեշխական տոհմի և Պոնտոսի Միհրդատյան արքայատոհմի ազգակցության, Երվանդունիների թագավորության վերջին շրջանում նրանց և Բագրատունիների առճակատման հարցերը: Այս պատմագիտական հիմնախնդիրներին են նվիրված այն գիտական 4 հոդվածներն ու 4 հաղորդումները, որոնք վերջին մեկ տարում պատրաստել է հարցն ուսումնասիրող խումբը՝ առաջատար գիտաշխատող, պ. գ. դոկտոր. Ս. Պետրոսյանի ղեկավարությամբ.

տպագրված է՝ Ս. Պետրոսյան, Գրախտի գետերի և Խավիլա, Զուշ երկրների տեղադրության շուրջ, «Պատմաբանասիրական հանդես», 2, 2006:

տպագրության ընթացքում են՝ 1. Ս. Պետրոսյան, Եռադասության մի դրսևորում Ուրարտուի զինված ուժերում, ԳՊՄԻ գիտական նստաշրջանի նյութեր, 2006: 2. Ս. Պետրոսյան, Գյումրու ուրարտական գոտու բեկորի մեհենագրերը, ՇՊՄԺ 7-րդ հանրագետական գիտաժողովի նյութեր, 2006: 3. Ս. Պետրոսյան, Հացահատիկի ուրարտական աստվածությունները, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, 2006: 4. Ս. Պետրոսյան, Ծ.Պետրոսյան, Արտամետի հին աստվածությունները, նույն տեղում: 5. Լ. Պետրոսյան, Ս. Պետրոսյան, Հայոց Արշամ թագավորը, ԳՊՄԻ գիտական նստաշրջանի նյութեր, 2006: 6. Լ. Պետրոսյան, Պոնտոսի արքայական և Գուգարքի բղեշխական տոհմերի ազգակցության շուրջ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտ. աշխատություններ», հ. 9, 2006:

▪ Հաշվետու տարում կենտրոնում զգալի աշխատանք է կատարվել մարզի տարածքի հնագիտական ուսումնասիրության ուղղությամբ: Պեղումները կատարվել են Շիրակի երկու հնավայրերում՝ Մեծ Սեպասար և Հայկաձոր: Կենտրոնի հնագիտական արշավախումբը (ղեկավար՝ ավ. գիտաշխատող Լ. Եզանյան, անդամներ՝ Հ. Խաչատրյան և Ն. Խաչատրյան) Մեծ Սեպասարի պեղումները իրականացրեց ամերիկյան Project Diskivry հիմնադրամի օգնությամբ: Հնագույն բնակավայրի արևմտյան հատվածի պեղումներով բացվեցին վատ թրծված և անորակ օջախ, խեցեղենի հում կավի անոթ, կարասի բեկորներ, օբսիդիանից սրածայր մի իր, կարմիր աստառով ուփայլուն սև արտաքինով բեկորային կարաս: Բոլոր նյութերը, որոնց կամերալ ուսումնասիրությունը կատարվել է, վերաբերում են մ.թ.ա. III հազարամյակին: Այս հատվածում բացվեց նաև նախորդ տարի պեղված սրբարանի արևմտյան կեսը, գտնվեցին զոհաբերված վեց գայլերի գանգեր, սև փայլեցված տարբեր ամանների բեկորներ, կուռքեր, ուլունքներ, խեցեղեն, ոսկորից գործիքներ և այլն: Նյութերը վերականգնվում են: Ոսկրաբանական նյութը հետազոտության համար հանձնված է ՀՀ ԳԱԱ կենսաբանության ինստիտուտ և Գերմանիա՝ Թուփինհեյնի համալսարան: Պեղված հուշարձանը չափագրվել է: Պեղումներով նաև պարզվում է, որ մ.թ.ա. III հազարամյակի այդ բնակավայրը անկումից հետո երկրորդ անգամ վերակառուցվել է միջնադարում՝ IX-X դարերում: Պատրաստ է հրատարակության խմբի ղեկավար Լ. Եզանյանի մենագրությունը՝ նվիրված Շիրակի անտիկ դամբարանային պեղումներին: Մեծ Սեպասարի պեղումներից հայտնաբերված իրերից 20-ը կամերալ ուսումնասիրությունից և վերականգնումից հետո 2007թ. հունվար-փետրվար ամիսներին ցուցադրվելու են Ֆրանսիայում Հայաստանի տարվա շրջանակներում կազմակերպվող «Հայաստանի լեռներում» ցուցահանդեսում: Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնի հնագետների խումբը հրատարակել է՝

1. Dans les montanjes de l'Armenie գիտական կատալոգ, Սան-Ռաֆայել և Ռուան (Ֆրանսիա), 2006:
2. Լ. Եզանյան, Բենիամինի անտիկ և հելլենիստական թաղումները, նույն տեղում:
3. Լ. Եզանյան, Մեծ Սեպասարի հնավայրը, նույն տեղում:
4. Լ. Եզանյան, Հայկաձորից գտնված կանացիակերպ աղամանը, ԳԱԱ ՀԱԻ գիտաժողովի նյութեր, Եր., 2006:
5. Հ. Խաչատրյան, Բենիամինի անտիկ բնակավայրը,
6. Հ. Խաչատրյան, Հացիկի «Ծակ քար» սրբավայրը, ԳԱԱ ՀԱԻ գիտաժողովի նյութեր, Եր., 2006:

Պատրաստվել է տպագրության՝

1. Լ. Եզանյան, Մեծ Սեպասարի 2006 թ. պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, 2006:
2. Լ. Եզանյան, Ախուրյանի կիրճի քարանձավային բնակավայրերը, նույն տեղում:
3. Հ. Խաչատրյան, Նորահայտ կնիքներ և կնքադրոշեր, նույն տեղում:

▪ Թեմայի շրջանակներում զգալի աշխատանք է կատարվել նաև Շիրակի բանահյուսության ուսումնասիրության ուղղությամբ. իրականացվել է բանագիտական և բանահավաքչական զգալի աշխատանք: Ճշգրտվել և հարստացվել են նոր նյութերով նախկինում խմբի կողմից կազմված բանասացների անվանական, սեռատարիքային, աշխարհագրական և ժամանակագրական ուղեցույցները: Շարունակվել է էթնո-հոգեբանական քննություն Շիրակի մարզի ազգաբնակչության սոցիալ հոգեբանական վիճակի շուրջ: Ազգաբնակչության շրջանում պարբերաբար անցկացվել են հոգեբանական տրենինգներ ինքնագնահատման և ինքնաներկայացման մեթոդների կիրառմամբ: Շարունակվել է աշխատանքը Շիրակի տարածքում ծիսական արարողությունների նշանակությունը, բնույթը, բովանդակությունն ու սիմվոլանշանային համակարգը ամբողջականացնելու ուղղությամբ: Խմբի կողմից մշակվել և գործադրվում են էքստրեմալ վիճակներում աղետյալ ազգաբնակչության հոգեկարգավորման գործընթացի գործուն մեխանիզմներ: Ուսումնասիրությունները պարսում են, որ Շիրակի տարածքի արդի բանահյուսությունը ավանդականի կողքին այսօր ունի զարգացման նոր առանձնահատկություններ՝ նոր մոտիվների հավելմամբ ու տեղայնացմամբ: Խնդիրն ուսումնասիրող խմբում են հոգ. գիտ. թեկնածու, ավ. գիտաշխատող Կ. Սահակյանը, գիտաշխատող Ռ. Հովհաննիսյանը և կրտսեր գիտաշխատող Ա. Մառաջյանը: Հաշվետու տարում նրանց կողմից հրատարակվել են՝ 1. Կ. Սահակյան, Editions Omiros, BP 30, f-93451, Ile Saint-Denis cedex, Ֆրանսիա, 2006: 2. Ժողովրդական պատկերացումների էթնոհոգեբանական դրսևորումներըտ հետաղետյան շրջանի երազներում, «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ» միջազգային երկրորդ գիտաժողով, Ծաղկաձոր, 2006: Հանձնված է տպագրության Կ. Սահակյան, Ռ. Հովհաննիսյան, էթնոհոգեբանական բացահայտումներ անձի հուզական աշխարհի վերաբերյալ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտ. աշխատություններ», հ. 9:

▪ Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնում իրականացվել է գիտահետազոտական աշխատանք նաև թեմատիկ ֆինանսավորմամբ՝ հետևյալ երեք թեմաների ուղղությամբ:

1. «Արևելյան Շիրակը XIX դարում և XX դարի սկզբներին (պատմագագարական ուսումնասիրություն)» (ղեկավար՝ պ. գ. թ. Ա. Հայրապետյան): Թեմայի գծով շարունակվել է քննվող ժամանակահատվածի պատմաժողովրդական տվյալների մեծածավալ հավաքչական աշխատանք՝ նպատակ ունենալով պատմագիտական գրականության, սկզբնաղբյուրների և հատկապես արխիվային հարուստ նյութի օգտագործմամբ, ամբողջացնել գավառի XIX դարի պատմաժողովրդագրական վիճակի պատկերը: 2006թ. ընթացքում ուսումնասիրվել են տարաբնույթ նյութեր՝ թանգարանային հավաքածուներ,

արխիվային և վիճակագրական տվյալներ, որոնք հավաքվել են Մաշտոցի անվան մատենադարանում (Կաթողիկոսական դիվան, Ա. Երիցյանի, Կարապետ արքեպիսկոպոսի, Ներսես Աշտարակեցու, Լազարյանների և Շահխաթունյանի ֆոնդեր), ՀՀ ազգային արխիվում (թիվ 28-Կովկասի Հայոց բարեգործական միություն Թիֆլիսում, թիվ 47- Եկեղեցիական չափագրական մատյաններ, թիվ 57- Ամենայն Հայոց կաթողիկոս, թիվ 90- գաղթերին վերաբերող փաստաթղթեր, գեկուցագրեր, նամակներ և այլ 14 ֆոնդեր), ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվում, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմի առաջնորդարանի արխիվում, ԳԱԱ Ֆունդամենտալ գրադարանում, Ազգային պատկերասրահում, Չարենցի անվան ԳԱԹ-ում, Նկարիչների միության թանգարանում, Գյումրու «Կումայրի-արգելոց» թանգարանում պահվող բացառիկ կարևորություն ներկայացնող ֆոնդերից: Թեմայի կատարող խումբը 2006թ. տպագրել է Աթանեսյան Լ., Աշոտ Հովհաննիսյան: Դիմանկարի փորձ, «Եղեգան փող», N 7-8 հոկտեմբեր-նոյեմբեր 2006: Հանձնված է հրատարակման. Հայրապետյան Ա., Արխիվային փաստաթղթերը Ալեքսանդրապոլի գավառի XIX դարի 70-ական թվականների ժողովրդագրության մասին, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, Գյումրի, 2006: 2. Հայրապետյան Ա., Աթանեսյան Լ., Դպրոցական գործն Ալեքսանդրապոլի գավառում XIXդ. վերջին XXդ. սկզբին, նույն տեղում: 3. Աթանեսյան Լ., Արդի հայ կերպարվեստն ու Գյումրու Մերկուրովի անվան նկարչական դպրոցը, նույն տեղում: 4. Ալեքսանյան Կ., Ալեքսանդրապոլի գավառը խորհրդային իշխանության հաստատման շրջանում, նույն տեղում: 5. Հայրապետյան Ա., Ալեքսանդրապոլի տնտեսական կյանքը XIXդ. 50-70թթ., «Հայոց պատմության հարցեր», հ. 8, Երևան: 6. Հայրապետյան Ա., Յարական կառավարության քաղաքային ռեֆորմները XIXդ. երկրորդ կեսին և Ալեքսանդրապոլը, ԳՊՄԻ տարեկան գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2006: 7. Աթանեսյան Լ., Ռաֆայել Աթոյան, նույն տեղում: 8. Ալեքսանյան Կ., Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականության վիճակը, նույն տեղում:

2. *«Շիրակի ժողովրդական և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթներն ու արդի միտումները»* թեմայի (ղեկավար՝ բ. գ. դ., պրոֆեսոր Սերգո Հայրապետյան) գծով հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են Շիրակի ժողովրդական և մասնագիտացված երաժշտության նմուշների ինչպես գրառման, այնպես էլ համակարգման աշխատանքները: Հիմնական ուշադրությունը բևեռվել է արևելյան ավանդական մասնագիտացված երաժշտության (մուղամի) մերօրյա կատարումների և Գյումրիում ներկայումս գործածվող տարբերակների վրա: Գրառվել են դուդուկով, շվիով, ուղով և կլառնետով մուղամներ (Ռաստ, Բայաթի, Շիրագ, Չարգա

և այլն): Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեև պահպանվել է դրանց մեղեդու լադախնտոնացիոն կառույցը, սակայն ներկայումս ամենատարբեր պատճառներով դրանցում առկա են նաև այլազան ինտոնացիաներ: Մյուս կողմից էլ պահպանվել է մուղամի նկատմամբ երաժիշտ կատարողների հետաքրքրությունը: Ավելին, տարածում է ստացել հատկապես վերջին տասնամյակում զարգացում ապրած երգվող մուղամի տարբերակը, և իբրև ավանդական մասնագիտացված երաժշտական ստեղծագործության տեսակ, մուղամն այսօր էլ հայ ազգային մոնոդիկ մտածողության հիմքում ընկած բնորոշիչների կրող է: Այս առումով շարունակվել են նաև Ն. Տիգրանյանի Ալեքսանդրապոլում գրառած և մշակած մուղամների, ժողովրդական պարերի, քաղաքային ժողովրդական երգերի ուսումնասիրման աշխատանքները: Նորահայտ մոտիվներով համալրվել է կոմպոզիտորի արխիվը: Այս մասին խումբը պատրաստում է գիտական հրատարկումներ՝ կազմելու համար Ն. Տիգրանյանի նվիրված գիտական հոդվածների ժողովածու, որը ստեղծման փուլի մեջ է: Կատարվել է նաև արխիվային հավաքչական աշխատանք Չարենցի անվան ԳԱԹ-ում: Ուսումնասիրվել են աշուղ Շերամի և Ալեքսանդրապոլում հայտնի հասարակական գործիչ Պ. Մոճոռյանի անձնական արխիվները: Առաջնահերթ նպատակ է դրվում թեմայի շրջանակներում ստեղծել Շերամի կյանքին ու ստեղծագործական ժառանգությանը վերաբերող նյութերի ժողովածու, որը պատրաստ կլինի 2007թ. աշնանը՝ մեծ աշուղի ծննդյան 150-ամյակի տարելիցին: Մեծ կարևորություն է տրվում XIX դարի Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթի լավագույն գիտակ Պ. Մոճոռյանի անձնական արխիվի ուսումնասիրությունը (թատրոն, սազանդարներ, երգիչներ, կոմպոզիտորներ, քաղաքային տոնախմբություններ), ինչը հնարավորություն կնձեռի ամբողջացնելու թեմայի շրջանակներում Ալեքսանդրապոլի քաղաքային մշակույթի համակողմանի նկարագրությունը: Հաշտու ժամանակաշրջանում հրատարակվել են՝ 1. Ս. Հայրապետյան, Շիրակի արդի ժողովրդական երգարվեստի լեզվական հարցեր, ԳՊՄԻ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2005 : 2. Հ. Ափինյան, Ալեքսանդրապոլի աշուղական արվեստը և հայ պոֆեսիոնալ երաժշտությունը, «Երաժշտական Հայաստան», Երևան, 2006, N1: 3. Հ. Ափինյան, Ն. Տիգրանյանի երաժշտական ժառանգության որոշ հարցեր, Ժամանակակից պրոբլեմների ուսումնասիրությունը բուհերում, հ. 8, Գյումրի, 2006: 4. Հ. Ստեփանյան, Ավետ Տերտերյանը երաժշտական մասնագիտական կրթության հիմնախնդիրների մասին, նույն տեղում: 5. Հ. Ստեփանյան, Հայոց գրերի գյուտը երաժշտատեսական խնդիրների համատեքստում, Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2006: 6. Հ. Ստեփանյան,

Հայ միջնադարեան երաժշտութեան տեսութեանն առնչուող յիշատակութիւնները Ե-ԺԵ դդ. ձեռագրերի յիշատակարաններում, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԻԶ, Պէյրոս, 2006: 7. Հ. Ստեփանյան, Նվագարանները հայ միջնադարյան գուսանական արվեստում, «Արվեստ և ժամանակ. հայացք Գյումրուց», 2006, N1: 8. Հ. Ստեփանյան, Նվագ` հանուն խաղաղության, նույն տեղում: Հանձնված են տպագրութեան 1. Հ. Ստեփանյան, Աշուղ Շերամը և հայ պրոֆեսիոնալ երաժշտությունը, Աշուղագիտական հոդվածների ժողովածու, Երևան. 2007: 2. Հ. Ստեփանյան, Նվագարանները հին հայոց քանակում, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, 2006: 3. Հ. Ստեփանյան, Գրիգոր Մագիստրոսը և հայ միջնադարյան երաժշտությունը, «Մանրուսում», միջազգային տարեգիրք, հ. 3, Երևան, 2007:

3. *«Ալեքսանդրապոլ - Լենինական - Գյումրի քաղաքի պատմագագարական ուսումնասիրություն»* (ղեկավար` պ. գ. թ. Կ. Բազեյան) թեմայի գծով հաշվետու ժամանակահատվածում խումբը շարունակել է նոր սկզբնաղբյուրների հավաքման և դրանց համակարգման աշխատանքները ԳԱԱ ՀԱԻ արխիվում (Հ. Գյուլեցյանի, Ն. Նիկողոսյանի, Մ. Թամրազյանի, Խ. Չահրիյանի ձեռագիր հիշողություններ), Պատմության ազգային թանգարանի արխիվում (Ատրպետի ձեռագրերը), ՀՀ Ազգային արխիվի Շիրակի բաժանմունքում (սփյուռքահեյարի ներգաղթի և գյուղական աշխատուժի ներթնիկ խմբերի դեպի քաղաք ներհոսքի հարցեր) և այլն: Թեմայի կատարման շրջանակներում խմբի առջև ծառայած խնդիրներից մեկը տարբեր տեսակի գործընթացների փոխազդեցության արդյունքում ձևավորված նոր էթնիկ երևույթների ուսումնասիրությունն է, դրանց թվում նաև` մշակութային էկոլոգիայի խնդիրները, ժողովրդական արհեստների զարգացման միտումները և այլն: Խումբը դաշտային ազգագրական նյութի հավաքման նպատակով անցկացրել է ազգագրական գիտարշավ Շիրակի մարզի Ախուրյանի, Անիի և Արթիկի նախկին վարչական շրջաններում` վեր հանելու քաղաք-գյուղ, մարզկենտրոն-ծայրամաս տնտեսական, մշակութային կապերի ու փոխհարաբերությունների բնույթը և առկա ժողովրդական գործընթացները: Հավաքված դաշտային նյութի նախնական մշակումից պարզ է դառնում, որ քաղաքային կենցաղի ձևավորման հիմքում Շիրակի վերոհիշյալ տարածաշրջանները և դրանց բնակչությունը կարևոր դեր են խաղացել: Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել են` 1. Գ. Աղանյան, Կ. Բազեյան, Город Александрополь как носитель инновационных ценностей и культурных взаимосвязей на Кавказе, Тезисы международной научной конференции, Батуми. 2006: 2. Ա. Բոյաջյան, Գյումրիի բնակչության աճի տեմպերը և զարգացման հեռանկարները, Աշխարհագրական գիտությունը Հայաստանում, ժող., Երևան, 2006: 3.

Նույնի, Изменения этнодемографической ситуации на Южном Кавказе. Тезисы международной научной конференции, Батуми. 2006: Տպագրության մեջ են 1. Կ. Բազեյան, Թաշկինակը հայոց ամուսնարնտանեկան ծեսերում, Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ, միջազգային երկրորդ գիտաժողովի հոդվածների ժողովածու, 2006: 2. Նույնի, Особенности интерьера города Александрополя, Սարանսկի միջազգային գիտաժողով, 2007: 3. Նույնի, 19-րդ դարավերջի Կարսի արհեստներն ըստ Ատրպետի «Ի՞նչ ժառանգեցինք» ձեռագիր աշխատության, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, 2006: 4. Նույնի, Գյումրի - Ալեքսանդրապոլի ազգագրության ձեռագիր սկզբնաղբյուրները, ներկայացված է ԳՊՄԻ տարեկան հանրապետական գիտաժողով, 2006: 5. Գ. Աղանյան, Մշակութային էկոլոգիայի հիմնահարցերը Գյումրիում, «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ» միջազգային երկրորդ գիտաժողովի նյութեր, 2006: 6. Ա. Բոյաջյան, Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մի քանի հարցեր, մաս II, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 9, 2006: 7. Նույնի, Էթնոժողովրդագրական գործընթացները և աշխարհաքաղաքական իրադրությունը Կովկասում, ԳՊՄԻ տարեկան հանրապետական գիտաժողովի նյութեր, 2006:

3. –

4. -

5. -

6. -

7. –

8. -

**Աղյուսակ 1-**

**Աղյուսակ 2 2006թ. ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի թեմատիկայի ամփոփ տվյալներ**

Հիմնարկությունը	Պատրյուցեից ֆինանսավորվող թեմաների թիվը					
	բազային		թեմատիկ		նպատակային	
	սկիզբը	ավարտը	սկիզբը	ավարտը	սկիզբը	ավարտը
1	2	3	4	5	6	7
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն	1	-	3	-	-	-



Աղյուսակ 3. –

Աղյուսակ 4. **Կենտրոնում անցկացված հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ**

Հ. Հ.	Միջոցառումներ	անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում՝ արտ. երկրներից
1	2	3	4	5
1.	Գիտական ընթերցումներ նվիրված աշուղ Շերամի ստեղծագործական ժառանգությանը	4-6 ապրիլի Գյումրի	25	
2.	Գիտաժողով «Զաղաքի օրվա» շրջանակներում նվիրված Գյումրու արհեստներիին	14 սեպտեմբեր Գյումրի	45	3
3.	Հանդիպում «Հայրենիք Սփյուռք» համաժողովի մասնակիցների հետ	23 սեպտեմբեր, Գյումրի	23	11

Աղյուսակ 5 **ԳԱԱ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ -անդամ երկրներ, կատարած գործուղումները**

	Հիմնարկությունը	Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
			Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանքն կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
1	2	3	4		5
1	ՇՀՀ կենտրոն	Վրաստան, Ռուսաստան	3 4		

Աղյուսակ 6. –

Աղյուսակ 7. -

Աղյուսակ 8. **ԳԱԱ գիտաշխատողների 2006 թ. հրապարակումների ընդհանուր քանակը**

	Հիմնարկությունը	Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումներ թեզիսներ և այլն	
		Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.	Հանրապետ.	Արտասահմ.
1	2	3	4	5	6	7	8
1	ՇՀՀ կենտրոն	-	-	2	-	37	15

Աղյուսակ 9. **Ասպիրանտների թվաքանակը**

Հիմնարկությունը	Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1.01.2006 թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
	ա/կ.	ա/չկ.	ա/կ.	ա/չկ.
1	2	3	4	5
ՇՀՀ կենտրոն	1	2/2	1	-

**Աղյուսակ 10. ԳԱԱ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ**

N	Հիմնարկությունը	Աշխատողների ընդհանուր թիվը/այդ թվում կանայք/	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը/այդ թվում կանայք/	ԳԱԱ ակադեմիկոսներ /այդ թվում կանայք/	Գիտության դոկտորներ /այդ թվում կանայք/	Գիտության թեկնածուներ /այդ թվում կանայք/
1	2	3	4	5	6	7
1	ՇՀՀ կենտրոն	21/15	16/8	-	2/0	7/6

**Աղյուսակ 11. –**

**ՇՀՀ կենտրոնի տնօրեն՝**

**Ս. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

## Ա Կ Տ

### Գիտական աշխատանքի հանձնան-ընդունման

կազմված է « \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 200 թ.

Մենք, ներքոստորագյալներս, մի կողմից «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» թեմայի ղեկավարը՝ ի դեմս բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի, մյուս կողմից ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա ՊՈԱԿ-ի պրեզիդենտ Ռ. Մարտիրոսյանը, համաձայն գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «ՀՀ ԳԱԱ- ԾՁԲ -37» պայմանագրի 5 կետի՝ կազմել ենք սույն ակտը այն մասին, որ թեմայի շրջանակներում կատարված աշխատանքը բավարար է և համապատասխանում է օրացուցային պլանում նշված բոլոր փուլերի գծով պարտավորություններին:

Պատվիրատու \_\_\_\_\_  
ստորագրություն

Կատարողը \_\_\_\_\_  
ստորագրություն

Կ.Տ.